Արտատպված է՝ Ի. Ա. Բունին, Վիպակներ և պատմվածքներ, Ե., «Սովետական գրող» հրատարակչություն, 1998. Դորա Եսայանի թարգմանությամբ:

«ՄԱԴՐԻԴ»

Ուշ երեկոյան լուսնի լույսով քայլում էր նա Տվերսկոյ բուլվարով դեպի վեր և դիմացը դուրս եկավ մի աղջիկ. գնում էր զբոսնողի քայլքով, ձեռքերը փոքրիկ ձեռնամուշտակի մեջ, կարակուլե գլխարկը թեք դրած, գլուխը շարժելով ինչ-որ բան էր կամացուկ երգում: Մոտենալով, կանգ առավ:

— Չե՞ք ուզի հետս ընկերանալ:

Նայեց աղջկան. փոքրամարմին, կճատ քթիկով, մի քիչ

լայն այտոսկրոտ, աչքերը գիշերային կիսալույսի մեջ փայլում են, ժպիտը հաճելի է, անհամարձակ, ձայնը մաքուր՝ լռության, սառն օդի մեջ. . .

— Ինչո՞ւ չէ: Հաճույքով:

— Իսկ ի՞նչ կտաք:

— Մի ռուբլի սիրո համար, մի ռուբլի էլ մանր-մունր ծախսերի:

Աղջիկը մտածեց.

— Իսկ հեռո՞ւ եք ապրում: Թե հեռու չէ, կգամ, ձեզնից հետո դեռ ժամանակ կմնա էլի դուրս գալու:

— Երկու քայլի վրա: Այստեղ է, Տվերսկոյ բուլվարում, «Մադրիդ» հյուրանոց:

— Հա, գիտեմ: Էդտեղ մի հինգ անգամ եղած կամ: Ինձ էդտեղ էր տանում մի խաբեբա թուղթ խաղացող: Հրեա էր, բայց շատ բարի մարդ էր:

— Ես էլ եմ բարի:

— Ես էլ էդպես մտածեցի: Դուք սիրուն եք, ինձ իսկույն դուր եկաք. . .

— Որ այդպես է, գնանք:

Ճանապարհին շարունակ նայելով աղջկան,— զարմանալի հաճելի աղջիկ էր,— սկսեց հարցուփորձ անել:

— Իսկ ինչո՞ւ ես մենակ:

— Մենակ չեմ, մենք միշտ երեքով ենք դուրս գալիս՝ ես, Մուրը ու Անելյան: Մենք միասին էլ ապրում ենք: Մենակ թե էսօր շաբաթ է, նրանց կառավարիչները տարան: Իսկ ինձ ոչ ոք ամբողջ իրիկվա համար չի վերցնում: Ինձ էնքան էլ չեն վերցնում, սիրում են ավելի շատ չաղ կնիկներին կամ էլ Անելկայի նման: Նա չնայած նիհար է, բայց բոյ ունի, լեզվանի է: Ո՞նց է խմում, ու գնչուհու նման էլ երգել գիտի: Նա ու Մուրը տղամարդկանց ատում են, սիրահարված են իրար, ոնց են սիրահարված, ապրում են իսկը մարդ ու կնկա պես…

— Այո, այո. . . Մուր.— իսկ քո անունն ի՞նչ է: Միայն թե սուտ չասես, հնարես:

— Նինա է անունս:

— Սուտ ես ասում: Ճիշտն ասա:

— Դե, ձեզ կասեմ, Պոլյա:

— Երևի վաղո՞ւց չի, ինչ ման ես գալիս:

— Չէ, արդեն վաղուց է, գարնան սկզբից: Ախր ինչ եք մի գլուխ հարցուփորձ անում: Ավելի լավ է մի ծխախոտ տվեք: Երևի լավ ծխախոտ կունենաք, տեսնում եմ վրաներիդ հագուկապը:

— Կտամ, որ տեղ հասնենք: Ցրտին ծխելը վնաս է:

— Էհ, ոնց կուզեք, իսկ մենք միշտ էլ ցրտին ծխում ենք ու բան էլ չի լինում: Այ, Անելյային վնաս է, նա թոքախտ ունի. . . Իսկ ինչի՞ եք դուք սափրված: Նա էլ էր սափրված. . .

— Դու էլի խաբեբայիդ մասի՞ն ես խոսում: Լավ միտքդ ես պահել:

— Մինչև հիմի հիշում եմ նրան: Նա էլ էր թոքախտավոր, բայց ծխում էր, սարսափելի: Աչքերը վառվում էին, շրթունքները չորացած, կուրծքը ներս ընկած, թշերը փոս ընկած, մուգ. . .

— Իսկ թևերը մազոտ, սարսափելի. . .

— Ճիշտ է, ճիշտ է: Այ, դուք նրան ճանաչո՞ւմ եք:

— Էհ, ես նրան որտեղի՞ց պիտի ճանաչեմ:

— Հետո նա Կիև մեկնեց: Ես Բրյանսկի կայարան գնացի նրան ճանապարհելու, իսկ նա չգիտեր էլ, որ կգնամ: Գնացի, իսկ գնացքն արդեն շարժվել էր: Վազ տվեցի վագոնների հետևից, իսկ նա էլ հենց այդ ժամանակ գլուխը դուրս էր հանել պատուհանից, տեսավ ինձ, ձեռքով արեց, սկսեց բղավել, որ շուտով էլի կգա ու ինձ համար Կիևի չոր մուրաբա կբերի:

— Եվ չեկա՞վ:

— Չէ, երևի բռնեցին:

— Իսկ դու ո՞նց իմացար, որ նա խաբեբա է:

— Ինքն ասեց: Խմեց մի օր պորտվեյն, հարբեց, շատ տխրեց ու ասաց: Ես, ասեց, խաբեբա թուղթ խաղացող եմ, դա մեկ է, թե գողը, բայց ինչ անեմ, իմ հացն էլ դա է... Իսկ դուք դերասա՞ն եք:

— Դրա նման մի բան: Դեհ, հասանք. . .

Մուտքի դռան ետև, դռնապանի սեղանի գլխին փոքրիկ լամպ էր վառվում, ոչ ոք չկար: Պատի վրայի տախտակին կախված էին համարների բանալիները: Երբ նա վերցրեց իր բանալին, աղջիկը շշնջաց.

— Ինչո՞ւ եք էդպես թողնում: Կթալանեն:

Նա նայեց աղջկան, շարունակ ավելի զվարճանալով.

— Կթալանեն՝ Սիբիր կգնան: Բայց ինչ հրաշալի մռութ ունես դու:

Աղջիկը ամաչեց:

— Հենց մի գլուխ ծիծաղում եք. . . Գնանք շուտ, աստծու սիրուն, ախր թույլ չեն տալիս էսպես ուշ մոտդ համար տանել. . .

— Ոչինչ, մի վախեցիր, քեզ մահճակալիս տակ կպահեմ: Քանի՞ տարեկան ես: Տասնո՞ւթ:

— Զարմանալի մարդ եք: Ամեն ինչ գիտեք: Տասնութի մեջ եմ:

Բարձրացան դիք սանդուղքով, մաշված գորգի վրայով, մտան նեղ, թույլ լուսավորված, շատ խեղդուկ միջանցք, նա կանգ առավ, բանալին մտցնելով դռան մեջ,— աղջիկը բարձրացավ ոտնաթաթերի վրա, որ տեսնի, թե որ համարն է.

— Հինգը: Իսկ նա տասնհինգում էր, երրորդ հարկում…

— Եթե նրա մասին էլի մի խոսք ասես, քեզ կսպանեմ:

Աղջկա շրթունքները հավաքվեցին գոհ ժպիտով, նա թեթևակի ճոճվելով մտավ լուսավորված համարի նախասենյակ, քայլելիս արձակելով կարակուլե մորթու օձիքով վերարկուն.

— Իսկ դուք գնացիք ու մոռացաք լույսը հանգցնել…

— Հոգ չէ: Ո՞ւր է քո քիթ սրբելու թաշկինակը:

— Ինչների՞դ է պետք:

— Կարմրել ես, բայց քիթդ սառել է…

Աղջիկը հասկացավ, շտապով ձեռնամուշտակից հանեց թաշկինակի գունդը, քիթը սրբեց: Նա համբուրեց աղջկա սառն այտը ու թփթփացրեց ուսին: Աղջիկը հանեց գլխարկը, մազերը թափահարեց ու կանգնած սկսեց ոտքից դուրս քաշել երկարաճիտք կրկնակոշիկները: Ոչ մի կերպ չէր կարողանում հանել, ջանք գործադրելով, քիչ մնաց ընկնի, բռնեց նրա ուսից ու զրնգուն ծիծաղեց.

— Օ՛յ, քիչ մնաց գլորվեի:

Նա հանեց աղջկա վերարկուն սև զգեստի վրայից, որից կտորի և տաք մարմնի հոտ էր բուրում, թեթևակի նրան ներս հրեց սենյակ, բազմոցի մոտ:

— Նստիր ու ոտքդ տուր:

— Ոչինչ, ես ինքս. . .

— Նստիր, ասում են քեզ…

Աղջիկը նստեց ու նրան մեկնեց աջ ոտքը: Նա մի ոտքը ծալեց գետնին, աղջկա ոտքը հենեց մյուս ոտքին, աղջիկը ամաչելով քաշեց սև զգեստի փեշը:

— Այ թե ինչպիսին եք դուք, աստված վկա: Էս կրկնակոշիկներն իսկապես ոտքիս շատ նեղ են. . .

— Լռիր:

Եվ արագ մեկը մյուսի ետևից դուրս քաշելով նրա երկարաճիտք կրկնակոշիկները՝ միջի կոշիկն էլ հետը, ոտքից ետ գցեց զգեստի փեշը, պինդ համբուրեց մերկ ոտքը ծնկից վերև և տեղից բարձրացավ կարմրած դեմքով.

— Դեհ, շուտ արա. . . Չեմ կարող. . .

— Ի՞նչ չեք կարող,— հարցրեց աղջիկը, միայն գուլպայով փոքրիկ ոտքերով գորգին կանգնած, խղճալիորեն փոքրացած հասակով:

— Իսկական հիմարն ես: Սպասել չեմ կարող, հասկացա՞ր: Հանվե՞մ:

— Չէ, հագնվիր:

Եվ շրջվելով, մոտեցավ պատուհանին ու շտապով ծխեց: Կրկնակի ապակիների ետևում, ցածի մասում սառած, լուսնի լույսի տակ աղոտ լուսավորում էին լապտերները, լսվում էր, ինչպես դղրդոցով նրանց կողքից փողոցով դեպի վեր էին սլանում զանգակավոր սահնակները. . . Մի րոպեից աղջիկը ձայն տվեց.

— Ես արդեն պառկած եմ:

Նա լույսը հանգցրեց և շտապ հանվելով, պառկեց նրա կողքին վերմակի տակ: Աղջիկն, ամբողջ մարմնով դողալով, սեղմվեց նրան ու շշնջաց կամացուկ, երջանիկ ծիծաղով.

— Մենակ թե, աստծու սիրուն, վզիս չփչեք, թե չէ տնով մեկ կբղավեմ, շատ եմ վախենում խտուտից. . .

Դրանից մի ժամ հետո աղջիկը պինդ քնած էր: Աղջկա կողքին պառկած, նա նայում էր փողոցից թափանցող պղտոր լույսին խառնված կիսամթին, մտածելով իր համար այդպես էլ անհասկանալի տարակուսանքով. ինչպե՞ս կարող է նա լուսադեմին գնալ ինչ-որ տեղ: Ո՞ւր: Ապրում էր ինչ-որ զզվելի արարածների հետ մի որևէ լվացքատան գլխին, ամեն երեկո նրանց հետ դուրս է գալիս ծառայության, որպեսզի մի անասունի տակ մի երկու մանեթ աշխատի, և որպիսի

մանկական անհոգություն, միամիտ ապուշություն: Ինձ թվում է, որ ես էլ «տնով մեկ կբղավեմ», երբ սա վաղը հագնվի ու գնա. . .

— Պոլյա,— ասաց նա, նստելով ու բռնելով աղջկա մերկ ուսը:

Աղջիկը վախեցած արթնացավ.

— Ա՛խ, տեր աստված: Ներեցեք, խնդրում եմ, բոլորովին անսպասելի քնեցի. . . Ես հիմի, հիմի. . .

— Հիմա՝ ի՞նչ:

— Հիմի վեր կկենամ, կհագնվեմ. . .

— Չէ, պետք չէ, արի ընթրենք: Քեզ ոչ մի տեղ չեմ թողնի մինչև առավոտ:

— Ի՞նչ եք ասում, ի՞նչ եք ասում: Բա ոստիկանությո՞ւնը:

— Վերջ տուր: Իսկ իմ մադերան քո այդ խաբեբայի պորտվեյնից վատը չէ:

— Ինչի՞ եք մի գլուխ նրան երեսովս տալիս:

Նա հանկարծ վառեց լույսը, որ ուժեղ խփեց աղջկա աչքերին, աղջիկը գլուխը մտցրեց բարձի տակ: Նա ետ քաշեց վերմակը, սկսեց համբուրել աղջկա ծոծրակը, աղջիկը ուրախ թափահարեց ոտքերը.

— Օ՛յ, խտուտ մի տվեք:

Նա պատուհանի վրայից բերեց թղթե տոպրակը խնձորով և մի շիշ Ղրիմի մադերա, լվացարանի վրայից վերցրեց երկու բաժակ, նորից նստեց անկողնում և ասաց.

— Ահա, կեր և խմիր: Թե չէ կսպանեմ:

Աղջիկը պինդ կծեց խնձորը և սկսեց ուտել մադերան խմելով ու հետն էլ լրջորեն ասելով.

— Բա ի՞նչ եք կարծում: Միգուցե մեկն էլ հենց սպանի: Մեր գործն է էդպես: Գնում ես չգիտես ուր, չգիտես ում հետ, իսկ նա կարող է հարբած լինել, կարող է կիսախելագարի մեկն է, կհարձակվի վրադ ու կխեղդի կամ կմորթի. . . Բայց ինչ տաք համար է ձեր համարը: Նստած ես տկլոր ու տաք է, չես մրսում: Սա մադերա՞ է: Շատ եմ սիրում: Պորտվեյնի հետ չեմ համեմատի, պորտվեյնից միշտ խցանահոտ է գալիս:

— Չէ, ոչ միշտ:

— Ճիշտ եմ ասում, աստված վկա, գալիս է, թեկուզ շշին

երկու մանեթ էլ տաս, նույն հաշիվն է:

— Բեր, ուրեմն, էլի լցնեմ: Արի բաժակ-բաժակի տանք ու համբուրվենք: Խմիր մինչև վերջ, մինչև վերջ:

Աղջիկը խմեց և այնքան շտապով, որ շունչը կտրվեց, հազաց ու, ծիծաղելով, գլուխը գցեց նրա կրծքին: Նա բարձրացրեց աղջկա գլուխը և համբուրեց նրա թաց, քնքշորեն սեղմված շրթունքները:

— Իսկ ինձ ճանապարհելու կգա՞ս կայարան:

Աղջիկը զարմացած բացեց բերանը:

— Դո՞ւք էլ եք գնում: Ո՞ւր: Ե՞րբ:

— Պետերբուրգ: Բայց դեռ ոչ շուտով:

— Դեհ, փառք աստծու: Հիմի ես մենակ ձեզ մոտ կգամ: Կո՞ւզեք:

— Ուզում եմ: Միայն ինձ հետ: Լսո՞ւմ եք:

— Ինչ էլ տան, ոչ մեկի մոտ չեմ գնա:

— Այ, այդպես: Իսկ հիմի քնենք:

— Պետք ունեմ մի րոպեով. . .

— Ահա այստեղ է, պահարանիկի մեջ:

— Ձեր աչքի առաջ ամաչում եմ: Մի որպեով լույսը հանգցրեք. . .

— Ընդհանրապես կհանգցնեմ: Ժամը երեքն է…

Անկողնի մեջ աղջիկը պառկեց նրա թևին, նորից ամբողջ մարմնով սեղմվելով նրան, բայց արդեն մեղմ, քնքուշ, իսկ նա սկսեց խոսել. . .

— Վաղը միասին կնախաճաշենք. . .

Աղջիկը արագ գլուխը բարձրացրեց. .

— Որտե՞ղ: Այ ես մի անգամ եղել եմ «Տերեմում», դա Հաղթադարպասից այն կողմ է ընկնում, այնքան էժան է այնտեղ, ուղղակի ձրի, իսկ տալիս են շատ-շատ, ուտել չի լինում:

— Դա դեռ կտեսնենք, թե որտեղ: Իսկ հետո դու կգնաս տուն, որ քո գարշելիները չմտածեն, թե քեզ սպանել են, ու ես էլ գործեր ունեմ, իսկ ժամը յոթի մոտերքը արի ինձ մոտ, կգնանք ճաշելու Պատրիկեևի մոտ, այնտեղ քեզ դուր կգա՝ նվագախումբ, բալալայկաներ…

— Իսկ հետո գնանք «Էլդորադո», հա՞: Էնտեղ հիմի հիանալի ֆիլմ է՝ «Մեռյալ փախստականը»:

— Հիանալի է: Իսկ հիմա քնիր:

— Հիմի, հիմի. . . Չէ, Մուրը գարշելի չի, նա շատ-շատ դժբախտ է: Առանց նրա ես կորած էի:

— Ինչպե՞ս:

— Նա հորս քրոջ աղջիկն է:

— Այո:

— Հայրս վագոն միացնող բանվոր էր Սերպուխովի ապրանքային կայարանում, այնտեղ նրա կուրծքը ջնջխվեց բուֆերների արանքում, իսկ մայրս մահացել է, երբ ես փոքր էի, էդպես մնացի մենակ աշխարհում ու եկա նրա մոտ Մոսկվա, նա էլ պարզվեց վաղուց հյուրանոցում չի ծառայում, հասցեների սեղանում ինձ նրա հասցեն տվեցին, կառք նստեցի գնացի նրա մոտ զամբյուղս առած, Սմոլենսկի բազար, տեսնեմ սա էնտեղ ապրում է էդ Անելյայի հետ ու միասին էլ իրիկունները դուրս են գալիս փողոցներ. . . Դեհ, ինձ պահեց մոտը, իսկ հետո համոզեց, որ ես էլ դուրս գամ. . .

— Իսկ ասում ես, որ առանց նրա կորած էիր:

— Բա ի՞նչ պիտի անեի մենակ Մոսկվայում: Ճիշտ է, նա ինձ կործանեց, բայց հո իմ վատը չէ՞ր ուզում: Էհ, ինչ խոսենք: Միգուցե, աստված տա, մի աշխատանքի տեղ կգտնեմ հյուրանոցներում, բայց ես որ գտա, էլ տեղս չեմ թողնի, ու ոչ մեկին էլ ինձ մոտ չեմ թողնի, մենակ թեյանվերներն ինձ հերիք կլինեն: Այ, թե որ էստեղ, ձեր «Մադրիդում» լիներ: Դրանից էլ լավ բան:

— Ես դրա մասին կմտածեմ, գուցեև տեղավորեմ մի այդպիսի աշխատանքի:

— Ես չոքեչոք ձեզ շնորհակալ կլինեմ:

— Որ իդիլիան կատարյալ լինի. . .

— Ի՞նչ:

— Ոչինչ, ոչինչ, ես հենց այնպես, քնի մեջ եմ. . . Քնիր:

— Հիմի, հիմի. . . Էհ, շատ եմ մտածում. . .

26 ապրիլի 1944